ՏԵՂԵԿԱՆՔ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 25. Ազգային անվտանգության մարմինների սպառազինության և հանդերձավորման միջոցները

Ազգային անվտանգության մարմինները մշակում, ստեղծում, ձեռք են բերում և օգտագործում են սպառազինության և հանդերձավորման միջոցներ (ներառյալ՝ տեխնիկական և այլ հատուկ միջոցներ), ձեռք են բերում և օգտագործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ազգային անվտանգության մարմինների համար նախատեսված և սպառազինության համար ընդունված ~~մարտական զենք, ինչպես նաև ծառայողական~~ զենք ու ռազմամթերք:

Ազգային անվտանգության մարմինների կողմից օգտագործվող սպառազինության և հանդերձավորման միջոցների (ներառյալ՝ հատուկ տեխնիկական և այլ միջոցներ) փոխանցումը, Հայաստանի Հանրապետությունից արտահանումը և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծումն ազգային անվտանգության մարմիններն իրագործում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: